# ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնս զանազան տեղերից, մանաւանդ ուսանողական խմբերից և չքաւոր ուսումնարանների հոգաբարձութիւններից ստացած է նամակներ, խնդրելով, որ «Մուրճ»-ը նրանց ուղարկւի ձրիապէս 1890 թւականին։ Ամենքի համար մեր պատասխանը եղած է միատեսակ.—մինչև որ «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը չ'անցնի 650 թիւը, մենք մեր կողմից ձրի ոչ ոքին ուղարկել չենք կարող, հետեւապէս կը մնայ, որ հասարակութիւնից մարդիկ գտնւին, որոնք նոցա փոխարէն վճարեն։ Այդպիսի նամակներ ստացւած են առ այժմ՝ Երևանի հայ ուսանողութիւնից, Դաւրէժի հայկական գրադարանից, Քարւանսարայի ուսումնարանի հոգաբարձութիւնից, Թիֆլիսի Էժանագին Գրադարանից, Ղուբայի ուսումնարանի հոգաբարձութիւնից։

Նուխւայ, Ջաքաթալի և Ցղնայի հայոց ուսումնարաններին «Մուրճ» կ'ուղարկւի 1890 թւականին՝ իբր նւէր պ. պ. Յովհաննէս և Աբրահամ Բունիաթեանցներից, Վլադիկաւկազի Դպրոցին՝ նւէր նոյն ուսումնարանի հոգաբ. պ. Հախւերդեանցից, Ռաշտի հայոց գրադարանին՝ նւէր պ. Ա. Մելիք-Ագաբեանցից և Ակկերմանի (Բեսարաբիա) հայոց ուսումնարանին՝ նւէր նոյն ուսումնարանի հոգաբարձու պ. Խուդաւերդի Աստւածատրեանից։

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ յայտարարում ենք, որ անցեալ 1889 թւականի «Մուրճ»-ի 12 №-ները կարող են ստանալ 8 ռուբլով, երկու հատորով կազմած, (չը կազմած՝ 7 ր.), իսկ ոչ-բաժանորդներին 1889 թւականի «Մուրճ»-ը կը ծախւի 12 ռուբլով։